23.09.26 - 23.09.26
11:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ

Ս.թ. սեպտեմբերի 23-ին Երևանի պետական համալսարանում տեղի կունենա «ԲանՈՒԳործ. ԵՊՀ էքսպո-2026» միջոցառումը՝ մեկ վայրում համախմբելով ուսանողներին, շրջանավարտներին և գործատուներին՝ ստեղծելու համագործակցության, փորձի փոխանակման և տաղանդների բացահայտման նոր հնարավորություններ։

Միջոցառման ընթացքում նախատեսվում են նաև ոլորտային բանախոսություններ, քննարկումներ, ինտերակտիվ հարթակներ և այլ նախաձեռնություններ՝ միտված ուսանողների, համալսարանի և գործատուների միջև համագործակցության նոր ուղիների ստեղծմանը։

Ուսանող-համալսարան-գործատու համագործակցության էքսպոն 2026 թվականին կանցկացվի նորովի։

Նորույթ 1-ին. «ԲանՈՒԳործ. ուսանողական նախաձեռնություններ-2026» ծրագրի շրջանակում կներկայացվեն ուսանողների մշակած նորարարական միջգիտակարգային նախագծերը։ «ԲանՈՒԳործ. ԵՊՀ էքսպոյի» մասնակից կազմակերպությունները հնարավորություն կունենան ծանոթանալու երիտասարդների գաղափարներին, ընտրելու իրենց հետաքրքրող նախագծերը և հանդես գալու որպես գործընկեր, հովանավոր կամ համամենթոր։

Նորույթ 2-րդ. «ԲանՈՒԳործ. ԵՊՀ էքսպո-2026»-ի ժամանակ **«Կարիերայի լաբորատորիա»** հարթակի առաջին փուլում **«Կարիերայի առաջին քայլերը. գործատուների սպասելիքները» պանելային քննարկման** ընթացքում առաջատար ընկերությունների մարդկային ռեսուրսների կառավարման (HR) մասնագետները կտան հետևյալ հարցերի պատասխանները.

- Ինչի՞ են առաջինը ուշադրություն դարձնում սկսնակ մասնագետ ընտրելիս,

- Որքանո՞վ են կարևոր փորձը, կրթությունը և ինքնակենսագրականը (CV),
- Ո՞ր հմտություններն են իրականում տարբերակում թեկնածուներին,
- Ի՞նչ կարող ես անել դեռ համալսարանում՝ աշխատաշուկայում առավել պատրաստված հայտնվելու համար։

«Կարիերայի լաբորատորիայի» հաջորդ փուլում կներկայացվեն.

- **HR խորհրդատվական անկյուններ**՝ անհատական աշխատանքի և հետադարձ կապի համար,
- **«Զրուցարագ»՝** գործատուների հետ կարճ ու նպատակային հանդիպումների համար։

Միջոցառման մանրամասները՝ այստեղ։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am